

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՑՈՒ «ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ՄԵԿԵՆՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՐԵՆԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ

Բաճառիչ. գրա. դպրոց Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայագիտության մարզում վաղուց ի վեր արձանագրվել է այն իրողու-
թյունը, որ Վարդան Արևելցին (1200—1271) ծանոթ է եղել IV գարի բյու-
զանդական մատենագիր «Գրիգորի եպիսկոպոսի նիւսացոյ՝ Յաղագս երգոյ
երգոց» երկասիրության հայերեն թարգմանությանը և օգտվել է դրանից:
Եղած գրառումները հիմնականում կատարվել են համապատասխան ձե-
ռագրերի նկարագրության, ինչպես նաև Վարդանի Մեկնության առաջաբանի
հատվածական հրատարակության առիթներով և այդ իսկ պատճառով խիստ
կարճառոտ են, ունեն մատենագիտական տեղեկանքի բնույթ: Եղած գրա-
ռումները կարևոր են այն իմաստով, որ յուրաքանչյուր պատեհ առիթով ընդ-
գծվել կամ պարզապես արձանագրվել է Գրիգոր Նյուսացու և Վարդան Արե-
վելցու Մեկնությունների² առնչակցության փաստական կողմը: Բայց միաժա-
մանակ պիտի նկատել, որ երբեք փորձ չի արվել քննելու, բացահայտելու
այդ ընդհանրության բնույթն ու նշանակությունը գրական-մշակութային
կարևորության առումով, ընդունելու կամ մերժելու նման հատվածների օգ-
նությունը միակողմանի, հնարավոր է նաև փոխադարձ սրբագրությունների
հնարավորությունը, վեր հանելու հայոց ինքնուրույն գրականության ոլոր-
տում միջնադարում շրջանառություն գտած բյուզանդական մատենագրի եր-
կից քաղված հատվածների նոր ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության հնարա-
վորությունը և այլն:

Պահպանվել է Վարդան Արևելցու հիմնավորում-բացատրությունը՝ ուղղը-
ված նշված աշխատանքի պատվիրատու-մեկենաս Կիրակոս Գանձակեցուն.
«Յորմէ ցանկացողն դնէ զիւրն տալով զբովանդակն, որ է հաւատն, զի այն
է մերն ամենայն: Յորոց և դու ճանաչիս տէրունական՝ իր և անուն հարա-
զատ մեր եղբայր, Կիրակոս, լրբունեաց պետ: Եւ քաղցայնի կիրք մեր, Թ
մեծ մասն յուսոյն ի սուրբ եկեղեցի, որ և քում ըղձիցն կցորդել հրամայե-
ցեր, ի բան և ի գիր շատս, զհաւատն տեառն տալով, շնորհօք նորա կարեալ
մեզ զմնացեալն յՍրգոյ երգոյն, ի Գրիգորէ Նիւսացոյ, որ մեծն է՝ աղբիւր

1 Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կաղմեց
Յ. Տ ա շ ե ա ն. Վիեննա, 1895, էջ 1075, հմմտ. էջ 207, 210: Ղ. Ա լ ի շ ա ն. Հայագիտում.
Բ, Վիեննա, 1901, էջ 470—471: Հ. Ո ս կ յ ա ն. Հովհաննես վանականը և յուր դպրոցը.
Վիեննա, 1922, էջ 63—64: Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին,
կաղմեց Մ ե ս Ր ո պ Ք է չ ի շ ե ա ն. Վիեննա, 1964, էջ 290—291: Բ ա Ր դ է ն ա թ ո ո ա -
կ ի Յ կ ա թ ո Ղ ի կ ո ս. Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ աղգային Մատենադարանի հայոց. Ան-
թիլիաս, Լիբանան, 1961, էջ 442—446:

2 «Հատուածք Հիպոդիտեայք ըստ Մեկնութեանն երգոյ երգոց, որ ի Վարդանայք բնագրի
քննական հրատարակությունը, ռուսերեն ղուգահեռ թարգմանությամբ, իրացրել է ակադ. Ն. Մա-
ռը (տե՛ս Н. Я. Марр. Тексты и разыскания по армяно-грузинской филологии. III, СПб., 1901, с. LXXXVIII—CXIV). Մեծանուն գիտնականը Հիպոդիտոս Բոստարացու
երկը քննում է հունարեն, ասորերեն, սլավոներեն, հայերեն, վրացերեն (թարգմանված հա-
յերենից) առկա խմբագրությունների հենքի վրա: Հետազոտողը վրացերեն թարգմանության
անդրադառնալիս հատկապես ծանրանում է վերջինիս հայկարանությունների վրա (տե՛ս էջ
LV—LXX) և անում բազմաթիվ արժեքավոր դիտողություններ: Ն. Մառի համոզմամբ՝ հայերեն
վերոհիշյալ բնագրի հիմք ձեռագրերը ունեն լեզվաոճական և քերականական որոշակի առանձ-
նահատկություններ (տե՛ս LXXV—LXXVII):

և կեղեցւոյ, յնույ առաջնորդութեամբ հերիզինեա, համառօտ առեալ և զԳրիգորին ի սկզբանէ, որ ի վեր դտանի քան զկարն մեր յոյժ...³ Սույն հաղորդման հեղինակը, ինչպէս տեսնում ենք, հստակ պատկերացում ունի առաջադիր գործի ոչ միայն բնույթի ու նպատակի, այլև ենթադրվող սկզբնաղբյուրների ընդլրկման մասին: Ուշագրավ է այն իրողությունը, որ Վարդան Արեւելցին բուն աշխատանքի ընթացքում ամենայն բարեխղճութեամբ հետեւում է իր իսկ առաջադրած սկզբունքին: Այսպէս, օրինակ, համեմատություններ ցույց է տալիս, որ Գրիգոր Նյուսացու «Յաղագս երգոյ երգոց» աշխատանքից բաղված հատվածները իրականում շատ ավելի հաճախագեղ են, քան Գրիգոր Նարեկացու Մեկնությունից վերցված դրվագները, ուստի միանգամայն տեղին է օգտադործված հեղինակի՝ «համառօտ առեալ և զԳրիգորին» մասնավորեցումը, որը, ինչպէս պարզվում է, մեկ այլ գրադարում պահպանված խմբադրութեամբ կարգացվում է՝ «համառաւտ և այլ սակաւ ինչ եղևալ ի Գրիգորի Նարեկացւոյ»⁴:

Վարդան Արեւելցու Մեկնության գրադրերի համեմատությունը ցույց է տալիս, որ նա Գրիգոր Նարեկացու նույնանուն աշխատանքին դիմում է ընդամենը չորս անգամ⁵, մինչդեռ Գրիգոր Նյուսացուց կատարված քաղում-հղումները մի քանի տասնյակի են հասնում: Ասվածից հետևում է, որ հեղինակի առաջադրած համեմատության եղբոր միանգամայն իրական է:

Ավելորդ չէ նկատել մեկ այլ հանդամանք ես. իր օգտագործած սկզբնաղբյուրների շարքում Վարդան Արեւելցին առանձնահատուկ վստահութեամբ ու զննահատուկ ջերմութեամբ է արտահայտվում բյուզանդական մատենագրի վրաստակի նկատմամբ: Այդ է վկայում նրա հետևյալ սեղմ, ամփոփ, բայց միաժամանակ ընդլրկուն ձեակերպումը. «Փառաւորեալն յաստուծոյ Գրիգոր Նիսացի տեսալ ե պաւս և յուծեալ բարիոք զհանգոյցսն, և մեք մի իշխեսցուք աշխակերպել զնորայն հոգեբուխ իմաստութիւն, այլ որ ի կարգին է՝ աստուծով գնասցուք...»⁶:

Արդ՝ ե՞րբ է զրվել Վարդան Արեւելցու Մեկնությունը: Այս հարցի պատասխանը սխիտի փնարել Վարդանի երկի գրադրերում: Պարզվում է, որ պահպանված հինգ տասնյակից ավելի ձևագրերի մի մասում արձանագրվել է «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատության գրության տեղի, ժամանակի ու հարակից հանդամանքների հետ կապված ընդարձակ հաղորդում: Ահա այն. «Ի թուիս յևաթն հարիւրերորորդի շորեքտասաներորդի (=714+551=1265) եղև մեկնութիւն Երգոյ երգոյս ի Վարդանա գիտնականէ, տիեզերալուս և յիմաստուն վարդապետէ, յաստուածայմերձ սուրբ ուխտիս Հաղբատա, ինչ հովանեաւ սուրբ նշանիս փրկութեանս մերոյ արեգականս և հաւր և հաւաղողի որբութեանս⁸ մերոյ ի պատրիարքութեան հայոց Կոստանդնույ և Հեթմոյ պսակաւորին մերո, և յարհիւսկիսկոպոսութեան տէր Յովանիսի, զորս ի կումս իւր խնամեսցէ, և ի սէրն իւր մածուցէ Յիսուս Քրիստոս աստուածն մեր, բանն փեսաացեալ և հարսնաղղեցեալ»⁹:

³ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձև. N° 5452, էջ 1ա, 2մմտ. ձև. N° 5259, էջ 6ա, ձև. N° 1268, էջ 240ր, ձև. N° 2603, էջ 295ա, ձև. N° 1156, էջ 143ա—բ:

⁴ ՄՄ ձև. N° 5259, էջ 6ա, ձև. N° 2642, էջ 583ա:

⁵ Տե՛ս ՄՄ, ձև. N° 5452, էջ 4ա, 8բ, 16բ, 17ա:

⁶ ՄՄ, ձև. N° 5452, էջ 44ա:

⁷ Մատենադատությունը տե՛ս Փ. Փ. Անթապյան. Վարդան Արեւելցի, կյանքն ու գործունեությունը. գիրք Բ, Երևան, 1989, էջ 320—321: Կան բաղմաթիվ ամբողջական ձևագրեր, որոնք չունեն այդ հիշատակարանը (տե՛ս ՄՄ, ձև. N° 623, էջ 65ա, ձև. N° 1460, էջ 297ա, ձև. N° 1121, էջ 285բ, ձև. N° 2642, էջ 603ա, ձև. N° 1156, էջ 234ա):

⁸ ՄՄ, ձև. N° 3213, էջ 62բ՝ սրբութեանս:

⁹ ՄՄ, ձև. N° 5452, էջ 65բ, ձև. N° 2603, էջ 34բ, ձև. N° 3213, էջ 62բ: Պահպանվել է նույն իշխատակարանի համառոտ տարբերակը. հմմտ. «Ի թիւ 9ԺԴ (=714+511=1265) Մեկնութիւն Երգոյ երգոյս ի Վարդանա գիտնականէ ի տիեզերալուս և յիմաստուն վարդապե-

Խնչ կարելի է ասել նշված երկու մատենագիրների տեքստարանակաճանաչակցությունների մասին: Նյուսացի-Արևելցի նմանության ողջ ընթացքին հետևելուց հետո այն տպավորությունն է ստացվում, որ Վարդան Արևելցու քաղում-հղումները սկզբնաղբյուրի հետ ունեցած ուղղակի առնչակցության իմաստով միօրինակ չեն: Բավական հաճախադեպ են այն հատվածները, որոնցում հայ մատենագիրը իր նախասիրությամբ ու տեղական անհրաժեշտության թելադրանքով վերապատմում, վերադարձրում է «Յաղագս երգոյ երգոց» երկի այս կամ այն դրվագը¹⁰, Հասկանալի պատճառով նման դեպքերում բառական ընդհանրության օրինակ փնտրելը ճիշտ չի լինի: Սակայն բավական է ուշադիր վերլուծել այդ կարգի հատվածները՝ համոզվելու համար, որ իրականում դրանց հիմքում ընկած է բյուզանդական մատենագրի շարադրանքը:

Մյուս նկատելի երևույթը, այսպես կոչված, սկզբնաղբյուրը հնարավորին չափ սեղմելու, որոշ իմաստով բեռնաթափելու, հարկավոր նյութը, իրեն հետաքրքրող միտքը կամ շարադրանքի մասը վերցնելու փաստն է, որը ընդհանուր առմամբ սկզբնաղբյուրը համառոտելու եղանակ կարելի է կոչել: Կասկածից վեր է, որ այս դեպքում ևս հայ մատենագիրը առաջնորդվում է տեղական պահանջներով բավարարելու մտահոգությամբ: Սակայն ի տարբերություն նախորդ կետի, տվյալ պարագայում բառացի նմանության օրինակները (բառեր, արտահայտություններ, դարձվածներ) պահպանվում են: Դրանում համոզվելու համար փորձենք վկայակոչել մեկ օրինակ. Գրիգոր Նյուսացու «Եւ բլուրք, եւ լերինք ի վեր գերազանցեալք, եւ ի ներքոյ կացեալք»¹¹ միտքը Վարդան Արևելցու օրինակում արտահայտվել է երեք բառով՝ «լերինք և բլուրք խոնարհեսցին»¹²:

Վարդան Արևելցու աշխատանքում շատ ավելի նկատելի է սկզբնաղբյուրի միտքը բացելու, ընդարձակելու, այս կամ այն համառոտ, սեղմ, հաճախ բանաձևային ձևակերպումը հարակից բացատրությամբ օժտելու եղանակով ավելի պարզ, հասկանալի դարձնելու ձգտումը, որը, եղած համարնույթ օրինակների համադրումից ելնելով, կարելի է կոչել սկզբնաղբյուրի շարադրանքը ընդարձակելու ձգտում: Սակայն պիտի նկատել մի հանգամանք, որը հետևողականորեն պաշտպանվում է Վարդան Արևելցու գրեթե բոլոր այդ կարգի դրվագներում. Վարդանի առաջադրած բացատրությունները ուղղակիորեն ընկալվում են իբրև բյուզանդական մատենագրի համապատասխան բացատրության ջարուհակություն, ամենևին օտար մտքեր չեն և համահնչուն են ընդհանուր սյուժեի հետ: Ահա ասվածը հաստատող մի քանի օրինակ.

Ձեռ. № 1013 (ժողովածու,
1221 թ.)

Ձեռ. № 5452 (ժողովածու,
ԺԳ դար)

(Գրիգոր Նյուսացի)
Ձմեռն էանց, անձրեւն հեռացաւ
(էջ 70բ):

(Վարդան Արևելցի)
Ձմեռն էանց, անձրեւ հեռացան,
որք եւ տեսակք փորձութեան
(էջ 19ա):

Գնաց ինքեամբ (էջ 70բ):

Գնաց ինքեամբ, որ փորձութեանց

տէս (ձեռ. № 1268, էջ 273ա): Առաջարկվող թվականի ստուգությունը ձեռագրերում և այլուր չի քննարկվում, ուստի և այն անվերապահ ընդունվել է Ն. Մառի և ուրիշների կողմից (տե՛ս Н. М а р р. Укаэ. соч., с. XII): Սակայն բանասեր Փ. Անթապյանը ենթադրում է, որ «ձեռագրերում երբեմն ընթերցվող «ԶԺԴ» (1265) թվականը, միգուցե սկզբնաղբյուրում եղել է «ԶԴ» (1255). տե՛ս Փ. Անթապյան. Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը. գիրք Ա, Երևան, 1987, էջ 139:

¹⁰ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 1013, էջ 47բ, 52ա, 56ա, 57ա, հմմտ. ձեռ. № 5452, էջ 3բ—4ա, 8ա, 10ա—բ:

¹¹ ՄՄ, ձեռ. № 1013, էջ 70ա:

¹² ՄՄ, ձեռ. № 5452, էջ 18ա:

Մաղիկը երևեցան յերկրի (էջ 70բ)։
Ժամանակ յայտնելոյ ևհաս (էջ 70բ)։

Բղենի ընձեղեղաց զրոգրոշն իւր¹³
(էջ 70բ)։

Նյութագր-Արևելցի առնչակցությունն բնույթի, առանձնահատկությունների մասին մեր պատկերացումը հնարավորին չափ ամբողջական դարձնելու նպատակով պիտի արձանագործել մի օրինաչափություն ևս. կան հատվածներ էլ, որոնք բառացի նմանությամբ հետևում են սկզբնաղբյուրին, այսինքն փոխառու երկրից նույնությամբ վերաբնակեցվել են ընկալող երկրի բնագիր։ Վկայակոչենք այդ կարգի մեկ օրինակ.

Ձեռ. № 1013
(Գրիգոր Նյութագրի)

Յանկողնի իմում գիշերի խրնդ-
բեցի զոր սիրեաց անձն իմ։
Հայցեցի և ոչ գտի զնա¹⁴, կո-
շեցի զնա, և ոչ լուաւ ինձ¹⁵։
Յարեաց և շրջեցայց ի քաղա-
քի, ի փողոցսն, և ի հրապա-
րակսն, և խնդրեցի զոր սիրեաց
անձն իմ։ խնդրեցի զնա և ոչ
գտի¹⁶։ Գաին զիս պահապան-
քոն¹⁷, որ շրջէին ի քաղաքին։
Մի զոր սիրեաց անձն իմ տես-
էք։ Իբրեւ սուգ ինչ անցի ըստ
նոսա, դտի զոր սիրեաց անձն
իմ, իբրեւ փոքր ինչ դանց ա-
րարի։ Կալայ զնա և ոչ թողի
զնա, մինչեւ մաւծի ի տուն մաւր
իմոյ և ի շտեմարանս յղացելոյն
զիս¹⁸ (էջ 76ա)։

էր պատճառ նովաւ գնաց (էջ 19ա)։

Մաղիկը երևեցան՝ առաքինու-
թիւնք ի հոգիս (էջ 19ա)։
Ժամանակ յայտնելոյ ևհաս, կըա-
րելոյ զաւելորդս և զգաւսս (էջ 19ա)։
Բղենի ևտ զբողբոշ իւր, որ գա-
նախ գիշութիւնն, զոր ունի ի
բնութենէն, յովով անգամ ի ծալ-
րապտուկսն տա (էջ 19բ)։

Ձեռ. № 5452
(Վարդան Արևելցի)

Յանկողնի իմում ի գիշերի խրնդ-
րեցի զոր սիրեաց անձն իմ։
խնդրեցի, և ոչ գտի, կոշեցի, և
ոչ լուաւ ինձ։ Յարեաց և շրջեցայ
ընդ քաղաքս, ի փողոցս և ի
հրապարակս, խնդրեցի և ոչ
գտի։ Գտին զիս պահապանք
պարսպացն, միթէ զոր սիրեաց
անձն իմ տեսէք։ Իբրեւ փոքր մի
անցի, դաի զոր սիրեաց անձն
իմ։ Կալա զնա և ոչ թողի զնա,
մինչև մուծից զնա ի տուն մաւր
իմոյ և ի սենեակ յղացելոյն զիս
(էջ 21բ)։

¹³ Բնագիրը տե՛ս Patrologiae cursus completus. Series graeca, t. 41, p. 864—865 (այսուհետև՝ PG), հմմտ. Համազասպ Ոսկյան. Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանությունը, ուսումնասիրություն և բնագիր. Վիեննա, 1924, էջ 50 (այսուհետև՝ երգ երգոց)։

¹⁴ Հմմտ. Երգ երգոց, Ե, 6, հմմտ. Գ, 11։

¹⁵ Հմմտ. Երգ երգոց, Ե, 6, հմմտ. Գ, 1։

¹⁶ Հմմտ. Երգ երգոց, Ե, 6, հմմտ. Գ, 2։

¹⁷ Հմմտ. Երգ երգոց, Ե, 7։

¹⁸ Բնագիրը տե՛ս PG, t. 44, p. 884—885, հմմտ. Երգ երգոց, Ը, 2։ Գրիգոր Նյութագրու Մեկնության վեցերորդ ճառի սույն հատվածը մասնակի տարբերությամբ երիցս կրկնվում է նույն ճառում։ Այդ իրողությունը պատահական չէ, հայերեն թարգմանությամբ չէ պայմանա-
վորված, այլ գալիս է հունարեն բնագրից։ Կրկնվող երկրորդ հատվածը հետևյալն է. «Յան-
կողնի իմում ի գիշերի, ասէ, խնդրեցի զոր սիրեաց անձն իմ։ խնդրեցի զնա և ոչ գտի,
կոշեցի զնա, և ոչ լուաւ ինձ։ Յարեաց և շրջեցայց ի քաղաքի, ի փողոցս, և ի գոհհաս, և

Այս նույն համեմատությունից, ինչպես նաև այլուր հղած նույնական դրվագների զուգադրությունից միաժամանակ հետևում է, թե գրեթե առանց միջամտության են ներկայացվում աստվածաշնչական բացատրությունները: Եվ դա իրոք այդպես է: Բայց ասվածը ամենևին էլ չի նշանակում, թե Վարդան Արևելցին ձեռքի տակ ունեցել է Ս. Գրքի հայերեն թարգմանության կանոնիկ տեքստ և անհրաժեշտության դեպքում գիմել է վերջինիս օգնությանը: Մինչդեռ այս պարագայում ուղիղ հակառակը պիտի պնդել, որովհետև բավարար հիմքեր կան մտածելու, որ Վարդանը նման դեպքերում չի դիմում Ս. Գրքի հայերեն թարգմանության օգնությանը, այլ «Երգ երգոց»-ի անհրաժեշտ արտահայտությունները, առանձին ձևակերպումները, երբեմն նաև ոչ ընդարձակ հատված-օրինակները նույնպես քաղում է Գրիգոր Նյուսացու աշխատության ճիշտ այն նույն մասերից, որոնցից օգտվում է ինքը: Նյուսացու գործի աստվածաշնչական հղումները իրենց համապատասխան տեղայնացված հատվածներով են վերաբնակեցվում Վարդանի բնագրի տարբեր մասերում: Առ այդ կարելի է վկայակոչել մի քանի պատճառաբանություն: Ահա դրանցից երկուսը.

ա) Իր ձեռքի տակ հղած, տարբեր հաճախականությամբ օգտագործած սկզբնաղբյուրները անուն առ անուն հիշատակող, այդ աղբյուրների հարկավորության անհրաժեշտությունը հատուկ ընդգծող Վարդան Արևելցին, պիտի ենթադրել, որ Ս. Գրքի հայերեն թարգմանությունից անմիջականորեն օգտվելու դեպքում կանգնադառնար նաև վերջինիս և կհղեր այն: Մինչդեռ պահպանված գրչագրերի համեմատությունից պարզվում է, որ ոչ Վարդանը, ոչ էլ նրա գործի հետագա գրիչ-խմբագիրները բնավ չեն կարևորել այդ խնդրի անհրաժեշտությունը (ուրիշ կարգի խմբագրական, բնագրագիտական-տեքստաբանական լուսանցագիր գրառումներ կան): Ավելին, Վարդանի բնագրում հիշյալ աստվածաշնչական բացատրությունների համար ևս իբրև սկզբնաղբյուր ամենուր հիշվում ու հղվում է Գրիգոր Նյուսացու անունը:

բ) Երկրորդ առարկությունը հետևյալն է. համեմատությունը ցույց է տալիս, որ «Յանկողնի խմում ի գիշերի խնդրեցի...» սկսվածքով հատվածի բուն սկզբնաղբյուրը Ս. Գիրքն է¹⁹: Միաժամանակ պարզվում է, որ այդ նույն քաղվածքը Գրիգոր Նյուսացու վեցերորդ ճառում մասնակի տարբերություններով երիցս կրկնվում է: Նշված իրողությունը պատահական միջամտությամբ կամ Նյուսացու երկի հայերեն թարգմանության շրջանակներով բացատրելու չէ, որովհետև կրկնվող հատվածները նույնությամբ կան բյուզանդական մատենագրի հունարեն բնագրում: Արդ՝ Նյուսացի-Արևելցի ընդհանրությունը ցույց է տալիս, որ Նյուսացու Մեկնության աստվածաշնչական կրկնվող բացատրությունները որոշ տարբերություններով հանդերձ՝ կրկնվում են նաև Վարդանի աշխատանքում: Թվում է, այս փաստի առկայությունից մի հնարավոր հետևություն կարելի է անել՝ Վարդան Արևելցու Մեկնության էջերում հանդիպող աստվածաշնչական քաղումների հիմքը նույնպես Նյուսացու համանուն երկն է: Հակառակ պարագայում պիտի ընդունել, որ նմանության այդ օրինակները պարզապես պատահական զուգադրության արդյունք են, մի բան, որ քիչ է հավանական: Ասվածը հնարավորություն է տալիս հզորակացնելու. քանի դեռ չեն հայտնաբերվել, բանասիրությանը ծանոթ չեն հակառակը պնդելու հնարավորություն տվող նոր ձեռագիր աղբյուրներ, պիտի ընդունել, որ Վարդանի մեկնության աստվածաշնչական քաղումների ոկզբնաղբյուրը ևս Գրիգոր Նյուսացու «Յաղագս երգոյ երգոց» երկի հայերեն թարգմանությունն է:

խնդրեցի զոր սիրեաց անձն իմ: Հայցեցի զնա և ոչ զտի: Գտին զիս պահպանքն, որ շրջէին ի քաղաքի: Մի զոր սիրեաց անձն իմ տեսէք: Իբրև սուղ ինչ անցի ընդ նոսա, գտի զոր սիրեաց անձն իմ, իբրև փոքր ինչ զանց արարի: Կալալ զնա և ոչ թողի զնա, մինչև մառնի զնա ի տուն մար իմոյ, և ի շտեմարանս յղացելոյն զիս» (էջ 76բ, ընագիրք տե՛ս PG, t. 44, p. 888, հմմտ. Երգ երգոց, Գ, 1—4):

¹⁹ Հմմտ. Երգ երգոց, Գ, 1—4:

Այժմ մի քանի խոսք երկու մատենագիրների ընդհանրության օրինակ-ներում հնարավոր սրբագրությունների մասին:

Նյութացու Մեկնության շորրորդ ճառում կարդում ենք. «Նարդոս զհոտ փեսային հարսին տայ»²⁰, որը թարգմանությունն է հունարեն բնագրի. «ἡ νύμφος τῇ γυναικὶ τὸν νυμφίον τε νύμφη δίδωσι»²¹, Վերջինս, թվում է, որևէ վրիպում-անճշտություն չունի, համընթաց է հատվածի թարգմանության հետ, ուստի և հայերեն առկա վիճակը որևէ միջամտության անհրաժեշտություն չունի: Մինչդեռ Նյութացու միտքը մի փոքր այլ տեսքով է պահպանվել Վարդանի օրինակում. «Այլ և փեսային հոտն հարսին գայ»²², որտեղ խոսքը հոտի գալու մասին է և ոչ թե տալու, ինչպես նաև բացակայում է նարդոս անվանումը: Եթե սույն տարբերակը Վարդան Արևելցու ձեռքով կատարված միջամտություն չէ (իսկ նման օրինակներ կան համադրվող հատվածներում), ապա այն պիտի վերընթերցել ըստ սկզբնաղբյուրի, ուր խոսքը նարդոսի հոտը տալու մասին է և ոչ թե գալու:

Առաջադրվող սրբագրության ստուգությունը վերահսկելու հնարավորու-թյուն է տալիս նույն մատենագիրների ընդհանրության մեկ այլ օրինակ, որ-տեղ կրկին հանդիպում ենք նույն ձևակերպմանը և, որ էական է, երկու դեպքում էլ խոսքը նարդոսի հոտը տալու մասին է և ոչ թե գալու. «Զհոտ նորա իմ նարդոս տա ինձ»²³ (Նյութացի), «Նարդոս իմ ետ զհոտ իւր»²⁴ (Արևելցի):

Նույն հատվածի հետ կապված հաջորդ ասելիքը վերաբերում է առա-ջադրված սրբագրության շարունակության մեջ հանդիպող Նյութացու «մարմ-նոյ եկեղեցւոյ» (էջ 60բ) արտահայտության դիմաց Արևելցու նախընտրած (ձեռագրերում այլ տարբերակ չունենք) «անդամոց եկեղեցւոյ» (էջ 12ա) կի-րառությանը: Համադրվող դրվագների որոշակի նմանությունը հնարավորու-թյուն է տալիս մտածելու, որ Վարդան Արևելցու հիշյալ հատվածում պահ-պանված արտահայտության անդամ (անդամոց) բաղադրիչը աղավաղում չլինելով հանդերձ՝ իր հայտնի նշանակությամբ²⁵ գոնե եկեղեցի հասկացու-թյան հետ կիրառության այլուր պահպանված օրինակ չի տալիս: Մինչդեռ Վարդանի սկզբնաղբյուրի «մարմնոյ եկեղեցւոյ» կապակցության իսկությունը հավաստվում է նույնի հունարեն բնագրով, ուր ասված է՝ «τοῦ σώματος τῆς Ἐκκλησίας»²⁶, Պիտի ենթադրել, որ բյուզանդական մատենագրի տարբե-րակը նախընտրելու համար քավարար հիմքեր կան:

Գրիգոր Նյութացու Մեկնության մեկ այլ դրվագում կարդում ենք. «Հայ-ցեցի եւ ոչ գտի զնա, կոչեցի զնա և ոչ լուաւ ինձ», «խնդրեցի զնա եւ ոչ գտի»²⁷: Նյութացու Մեկնության հայերեն թարգմանությունից օգտվող Վար-դան Արևելցին այս դեպքում ևս սկզբնաղբյուրին է հետևում բառացի նմա-նությամբ՝ «խնդրեցի և ոչ գտի, կոչեցի և ոչ լուաւ ինձ», «խնդրեցի և ոչ գտի»²⁸: Համեմատությունը ցույց է տալիս, որ նշված բուն հատվածները հիմնականում նույնը լինելով հանդերձ՝ Արևելցու օրինակում ինչ-ինչ պատ-ճառով երիցս օտարվել է նա (զնա) դերանունը և այդ իսկ պատճառով հայ մատենագրի միտքը մասամբ թերավարտ է, խնդրանքն ակամայից մնացել է անհասցե: Մինչդեռ Նյութացու երկի և՛ վկայակոչված մասում, և՛ վերջինիս շարունակության մեջ ունենք զնա կիրառությունը, որը հասկանալի պատ-

²⁰ ՄՄ, ձեռ. № 1013, էջ 60բ, հմտ. Երգ Երգոց, Ա, 12՝ Նարդոս իմ ետ զհոտ իւր:

²¹ PG, t. 44, p. 825.

²² ՄՄ, ձեռ. № 5452, էջ 12ա:

²³ ՄՄ, ձեռ. № 1013, էջ 59բ:

²⁴ ՄՄ, ձեռ. № 5452, էջ 11բ:

²⁵ Ունի մասն մարմնոյ կենդանաց (ՆԶԲ, Ա, 130), մասունք մարմնոյ (Առձեռն բառա-լիան..., էջ 49) իմաստները:

²⁶ PG, t. 44, p. 825.

²⁷ ՄՄ, ձեռ. № 1013, էջ 76ա:

²⁸ ՄՄ, ձեռ. № 5452, էջ 21բ:

ճառով անհրաժեշտ է վերականգնել նաև Արևելցու հատվածում: Նշված դե-
րանունը կա նաև Նյուսացու Մեկնության բնագրում և կոչված է ճիշտ նույն
դերը կատարելու: Բյուզանդական մատենագրի երկի հայերեն թարգմանու-
թյան «ոչ գտի զնա» արտահայտության դիմաց հունարենում ունենք «οὐχ
εὕρον αὐτόν»²⁹, իսկ «կոչեցի զնա» և «խնդրեցի զնա» կապակցությունների
փոխարեն համապատասխանաբար՝ «εκαλεσα αὐτόν»³⁰, «ἐζητήσα αὐτόν»³¹:
Նա (զնա) դերանվան վերականգնման անհրաժեշտությունը հունարենից բա-
ցի երկու դեպքում հաստատվում է նաև աստվածաշնչական համապատաս-
խան վկայությամբ³²: Այսպիսով, վերոշարադրյալը հնարավորություն է տա-
լիս ասելու, որ կան բավարար հիմքեր Վարդան Արևելցու հատվածի նշված
արտահայտությունները սկզբնաղբյուրի հետևությունները լրացնելու և վերըն-
թերցելու «ոչ գտի զնա», «կոչեցի զնա», «խնդրեցի և ոչ գտի զնա» տեսքով:
Վարդան Արևելցու նշված հատվածին վերաբերող հաջորդ սրբագրություն-
ներ կապվում է վերընթերցի «ի սենեակ յղացելոյն զիս» (էջ 21բ) մտքի հետ,
որի դիմաց սկզբնաղբյուրում առկա է «ի շտեմարանս յղացելոյն զիս» (էջ
76ա): Տարբերությունը, ինչպես տեսնում ենք, միայն ընդգծված բառերն են,
որոնք, կարելի է ասել, հավասարապես կիրառելի են տվյալ մտքի համար:
Այնուամենայնիվ, նշված ընթերցումներից ո՞րն է նախնականը և նախընտ-
րելին հարցին պատասխանելու իմաստով կարևոր նշանակություն ունի
Նյուսացու երկի հունարեն նախօրինակը: Պարզվում է, որ բյուզանդական
մատենագրի հայերեն թարգմանությունը կրկին համընթաց է հունարենի հետ,
որտեղ «ի շտեմարանս յղացելոյն զիս» կապակցության դիմաց ունենք «ἐν
ταμείῳ τῆς σιλαβόδογχε»³³: Հունարեն «ταμείον» բառի փոխարեն, որը
ունի գանձատուն, գանձարան, պաշար, պահեստ, մառան, խորհանոց³⁴
իմաստները, հայերենի թարգմանիչը նախընտրել է շտեմարան տարբերակը:
Նման ընտրությունը պատահական չէ, որովհետև հունարենի բառացի հետե-
վությամբ այն երեք անգամ է կրկնվում, երեք դեպքում էլ ճիշտ նույն վերո-
բերյալ մտքի դիպվածով³⁵: Այս իրողությունն էլ հիմք է տալիս մտածելու,
որ Վարդան Արևելցու սենեակ կիրառությունը հետագա միջամտությամբ
ընտրված տարբերակ կարող է լինել, մանավանդ որ ճիշտ նույնպիսի առի-
թով Մեկնության մեկ այլ դրվագում, դարձյալ Նյուսացու հետևություններ,
շտեմարան բառի կիրառության օրինակ է տալիս նաև Վարդան Արևելցու
բնագիրը: Ահա այդ հատվածը. «Թէ ոչ ի լրումն պիտոյից իւր ստեղծաբ, այլ
յանձառ բարութիւնսն և այն է ըշտեմարանն մեր և մաւրն մեր տունն՝ առա-
շին պատճառ արարչութեանն»³⁶:

²⁹ PG. t. 44, p. 885.

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում: Նյուսացու երկի հայերեն թարգմանության խնդրեցի դիմավոր ձևի դի-
մաց (խնդրեցի զոր սիրեաց անձն իմ) հունարենում ունենք՝ «ἐζητήσα αὐτόν» (=խնդրեցի
զնա), տե՛ս նույն տեղում:

³² Հմմտ. Ծրգ երգոց, Ծ, 6՝ խնդրեցի զնա եւ ոչ գտի: Կոչեցի զնա յանուան եւ ոչ լուա
ինձ, հմմտ. նույն տեղում, Գ, 1—2:

³³ PG. t. 44, p. 885.

³⁴ Древнегреческо-русский словарь, т. II, М., 1958, էջ 1600 (այսուհետև ПРС):

³⁵ Տե՛ս PG. t. 44, p. 885, 888, 893, հմմտ. հայերեն թարգմանությունը, ձեռ. № 1013,
էջ 76ա, 76բ, 78բ:

³⁶ ՄՄ, ձեռ. № 5452, էջ 22ա: Ի դեպ, սրբագրվող «ի սենեակ յղացելոյն զիս» կապակ-
ցությունը ճիշտ նույն տեսքով պահպանվել է նաև Ս. Գրքում (տե՛ս Ծրգ երգոց, Գ, 4): Սենեակ
ընթերցումը միակն է, ուստի և հրատարակիչը ընտրության հնարավորություն չի ունեցել
Վարդանի բնագրում վերականգնվող շտեմարան տարբերակը թերևս կարող է օգտակար լինել
նաև Ս. Գրքի այս հատվածի համար:

թյան նմանությունը Արևելցու աստուծոյ-ը (էջ 4ա) պիտի կարդալ աստուածային (էջ 47բ), տատրակի-ն (էջ 10ա)՝ գտատրակաց (էջ 57ա), յարեաց և շրջեցայ կապակցությունը (էջ 21բ)՝ յարեայց եւ շրջեցայց³⁷ (էջ 76ա), անձ-րևի հեռացան-ը (էջ 19ա)՝ անձրևն հեռացաւ (էջ 70բ), միթէ զոր-ը (էջ 21բ) մի զոր (էջ 76ա) և այլն:

Պարզվում է, որ Վարդան Արևելցու Մեկնությունն էլ իր հերթին հնարավորություն է տալիս առանձին դեպքերում վերանայելու, սրբագրելու բյուզանդական մատենագրի երկի հայերեն թարգմանության առանձին բառերու արտահայտություններ, որոնք, ինչպես երևում է հուշարձանի բնագրի համեմատությունից, արդյունք են գրչական միջամտության կամ հնարավոր է նաև պատահական սխալի: Այսպես, օրինակ, Նյութագրու Մեկնության հինգերորդ ձառում կարդում ենք. «Դարձո, ասելով, զլաւեացն զբերումնն, ով եղբարորդի իմ»³⁸: Նույն ձևակերպման դիմաց Արևելցու տեքստում ունենք՝ «ասէ, դարձիր եղբարորդի»³⁹ և, փաստորեն, բացակայում է զլաւեացն զբերումնն միջանկյալ կապակցությունը: Նյութագրու նշված հատվածի հայերեն թարգմանության և բնագրի համեմատությունը ցույց է տալիս, որ քննվող կապակցությունը հունարենում նույնպես առանց ընդգծված արտահայտության է ներկայանում. «Ἄποστρεψον, λέγουσα, ὡ ἀδελφιδέ»⁴⁰: Այս իրողության հենքի վրա կարելի է ենթադրել, որ զլաւեացն զբերումնն արտահայտությունը, թերևս, հետագա ընդմիջարկություն կարող է լինել: Ըթե հավանական է սույն ենթադրությունը, ապա նշված միջանկյալ դարձվածք պիտի օտարել Նյութագրու Մեկնության հայերեն թարգմանության պահպանված տեքստից: Առաջարկվող միջամտության օգտին են վկայում և՛ բյուզանդական մատենագրի Մեկնության բնագիրը, և՛ նրա հայերեն թարգմանությունից օգտվող Արևելցու աշխատանքի հնագույն ձևագիրը:

Երկու մատենագիրների նման հատվածների համեմատության միջոցին կարելի է հանդիպել նաև հակառակ իրողության. այսինքն Գրիգոր Նյութագրու հայերեն տեքստի և Վարդան Արևելցու Մեկնության օգնությամբ հնարավոր է լինում առանձին դեպքերում ոչ միայն օտարել, ինչպես նախորդ օրինակում, այլև լրացնել, նշված աղբյուրների օժանդակությամբ վերականգնել Նյութագրու երկի հայերեն թարգմանությունից ինչ-ինչ ճանապարհով երբևիցե դուրս մնացած այս կամ այն բառը: Այսպես, օրինակ, Նյութագրու Մեկնության հինգերորդ ձառում կարդում ենք. «Դտին զիս պահպանքն» (էջ 76ա): Նույն միտքը Արևելցու Մեկնության օրինակում պահպանվել է. «ավելի ավարտուն ու ամբողջական տեսքով՝ «գտին զիս պահպանք պարսպացն» (էջ 21բ): Հայ մատենագրի պարսպացն մասնավորեցման անհրաժեշտությունը հաստատվում է նաև բյուզանդական մատենագրի երկի հունարեն նախօրինակով, ուր համապատասխան կապակցության մեջ ունենք κυκλος (οἱ κυκλοῦντες)⁴¹ բառը, որի իմաստներից մեկը круговая стена, крепостные стены,⁴² միանգամայն համահունչն է Նյութագրու հատվածի պահանջվող բովանդակությանը: Ասվածը հիմք է տալիս մտածելու, որ, հավանաբար, ընդօրինակման կամ ուղղակի միջամտության եղանակով Նյութագրու երկի հայերեն օրինակից օտարված պարսպացն ընթերցումը վերականգնելու հնարավորություն են տալիս թե՛ նույն երկի բնագիրը և թե՛ հայերեն թարգմանությունից օգտվող Վարդան Արևելցու Մեկնությունը:

Ըիշտ նույն սկզբնաղբյուրների համեմատության եղանակով Գրիգոր

³⁷ Վարդան Արևելցու բնագրի հարակից գրվագում նույնությամբ պահպանվել է առաջարկվող լրացումը և շրջեցայց՝ նախընտրելի ձևը (տե՛ս էջ 21բ):

³⁸ ՄՄ, ձեռ. № 1013, էջ 76ա:

³⁹ ՄՄ, ձեռ. № 5452, էջ 21ա:

⁴⁰ PG, t. 44, p. 884.

⁴¹ PG, t. 44, p. 885.

⁴² DPC, I, c. 994.

Նյութացու Մեկնության հայերեն թարգմանության հովաներ-ը (էջ 75ր) վարդան Արևելցու աշխատանքի հետեությունումը պիտի վերընթերցել հովանաց (էջ 21ա), որք եղջիւրաց-ը (էջ 76ա)՝ որքուց եղանց (էջ 21ա), այծաման-ը (էջ 76ա) այծեման (էջ 21ա), մաւին-ը (էջ 76ա)՝ մաւինց (էջ 21ր) և այլն:

Այսպիսով, վերոշարադրյալի հենքի վրա կարելի է ընդհանրացնել.

ա) վարդան Արևելցին ծանոթ է եղել Գրիգոր Նյութացու «Յազազա երգոյ երգոց» աշխատության հայերեն թարգմանությանը և իր համանուն երկը շարադրելիս օգտվել է գրանից: Ընդհանրության բնույթից դատելով, վարդան Արևելցին հիմնականում մերժում է սկզբնաղբյուրին նույնությամբ հետևելու, պատրաստի շարադրանքը առանց անհրաժեշտ միջամտության վերարևելցնելու միջնադարում այնքան տարածված ու ընդունելի զրական նորմ դիտվող ձևը: Նա ընդհանրապես մատենագրի երկից օգտվում է վերապատմելու, համառոտելու, լեզվաբանական, առանձին դեպքերում նաև երկր-նային հետևելու եղանակով:

բ) Այլևս պարզ է, որ թարգմանական մատենագրությունից օգտվելու վարդան Արևելցու նախընտրած եղանակը ամենեին էլ պատահական չէ: Այլ ունի իր հիմնավոր պատճառաբանումը: Պիտի ենթադրել, որ վարդանի աշխատանքը նպատակ ունի բավարարելու, գոհացում տալու ժամանակի դրական-կրթական այն միջավայրի պահանջներին, ուր ապրում ու ստեղծագործում էին ինքը՝ վարդան Արևելցին, իր ուսուցիչ Հովհաննես Վանականը և վարդանի Մեկնության պատվիրատու Կիրակոս Գանձակեցին:

գ) Համադրվող երկու գրական հուշարձաններն էլ փոխադարձ սրբագրությունների հնարավորություն են ընձեռում: Իսկ դա կարևոր է հայագիտության համար այն առումով, որ թե՛ Գրիգոր Նյութացու և թե՛ վարդան Արևելցու խնդրո առարկա աշխատանքները անախ պ են, և պահպանված ձեռագրերը ըզմաթիվ փոփոխությունների ու շարադրացված միջամտությունների են ենթարկվել միջնադարյան գրիչ-ընդօրինակողների ձեռքով:

АРМЯНСКИЙ ПЕРЕВОД «ТОЛКОВАНИЯ ПЕСНИ ПЕСНЕЙ» ГРИГОРИЯ НИССКОГО И ВАРДАН АРЕВЕЛЦИ

Доктор филол. наук К. М. МУРАДЯН

Резюме

На почве переводной литературы в первую очередь формировались мировоззрение национальных писателей-переводчиков и те литературно-художественные концепции, которые должны были предопределить развитие зарождающейся самостоятельной литературы и которые, в сущности, повлияли на местный литературный процесс. Важность изучения этого явления давно признана в арменистике. Исследование показывает, что армянский перевод «Песни песней» Гр. Нисского стал литературным первоисточником для Вардана Аревелци. Определение и анализ заимствований из названного труда Гр. Нисского свидетельствуют о том, что В. Аревелци обращался к ним как к доказательствам излагаемых положений. Заимствованные отрывки тесно переплетены со структурой оригинального сочинения и несут полноценную функциональную нагрузку как в идеологическом, так и в художественном плане. Мы попытались ответить также на вопросы, когда, в какой среде и на какой литературной почве могли возникнуть подобные заимствования.